

Գ Ե Պ Ի Ա Ի Ա Ր Ա Յ Ի

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՎ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Արմենակ - Տեղակալ Վարդանի
Արիստակես - Պանդոկի պետ
Սամուել - Լրտես Արմենակի
Վասակ - Մարզպան Հայաստանի
Շապուհ - Նուիրակ Միհրանեսի
Արշակ, Վրէժ - Յաճախողներ
Զորս խօսուն հայ զինուորներ
Զարուհի - Յաւադին մայր
Լիա - Սպասուհի պանդոկին

☆

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է Արտաշատ քաղաքի արեւելեան արուարձանին վրայ պանդոկի մը. առջեւ պարտէզ, ուր դրուած են կոշտ սեղաններ, հողի փարչեր, քաներ, արձուներ:

Արմենակ. - (Տեղակալ Վարդան գոթալարին) Սամուել, քեզ հոս ծառայութեան պիտի դնեմ: Դուն խուլ եւ համարանէդ դուրս ելլէ: Պիտի լրտեսես եկող դաշողը, անոնց շարժումները, խօսքերը, դէմքերը, մանաւանդ երբ պարսիկներ ըլլան: Շատ կարեւոր եւ փափուկ գործ մը քեզի կը վստահիմ. ուշիմ եւ պարտաճանաչ եղիբ:

Սամուել. - Վստահ եղէք վրաս, տէր հարկերապետ, Որմիկը պէս հազար աւանջ եւ հազար աչք պիտի ըլլամ: Սուր դանակով ալ բերանէս խօսք մը դուրս պիտի չկարենան հանել:

Արմենակ. - (Զեռք սեղանին զարմելով) Է՛յ, Արիստակես, դուրս ելիբ, յա-

ճախորդ եկած է: Ի՞նչ... դեռ կը քնանա՞ս... Արիստակես, խո՛ւլ ես:

Արիստակես. - (Ներսէն) Ո՞վ է այս կանուխ ատեն: Պարտէզին մէջ նստէ մինչեւ հագուելիմ դամ:

Արմենակ. - Ի՞նչ, դեռ կը քնանա՞ս: (Զարմելով սեղանին) Ելի՛ր, արեւը տանիքիդ վրայէն ալ անցաւ:

Արիստակես. - Տէր ողորմեա (միշտ ներսէն) : Ո՞վ է այս եօթն ամսու ծնածը: Համբերէ, հիմա կու գամ (յօրանջելով բեմ կ'ելլէ): Ո՛հ, Արմենակ, դո՞ւն ես, մարդ Աստուծոյ անունդ չտայի՞ր: Կը ներես, անքաղաքավարի գտնուեցայ:

Արմենակ. - Ոչինչ, կ'երեւի երէկ շատ աշխատեցն յոգնած էիր: Քեզի այնպիսի յաճախորդ մը բերի որ զինի տասը տիկեր չեն դիմանար: Հողի պէս կարմիր զինի կը ծծէ:

Արիստակես. - Ասիկա՞...

Արմենակ. - Վճարելով չէ՞...

Արիստակես. - Ա՛ս է վճարողը. անօթութենէն բերանը բաց մնացեր է: Ետ տար ի սէր Աստուծոյ:

Արմենակ. - Ժիշտ ատոր համար եկա՞յ այսքան կանուխ: Այս խեղճը աղքատ, անօթի մոլորած էր ճամբուն վրայ: Հայ քրիստոնեայ է: Մէկը չունի. օտար նահանգէ եկած է. կ'ամչնայ մուրալ: Հայը, զիտես, անօթի կը մեռնի եւ չի մուրալ: Մենք իրարու չօգնենք, ո՞վ մեզի հաց կու տայ: Խորհեցայ թէ դուն հոս շատ գործունիս, մարդու պէտք ունիս. ամառ է, եկող դաշողներ շատ կան: Պատառ մը հացի համար թող աշխատի: Մեր Արիստակեսը բարի սիրտ մ'ունի, ըսի, խօսք չի մերժեր: Յետոյ խուլ եւ համար է, յաճախողներու հետ կու չ'ընեն, լուռ ու մունջ կ'աշխատի:

Արիստակես. - Ի՞նչ... խուլ եւ համար է...

Արմենակ. - Այո՛, խուլ եւ համար է: Արիստակես. - Ետ տար, ի սէր Աստուծոյ. դիտես փորձանք մի՛ բերեր: Իմ նեղութիւններս արդէն շատ են:

Արմենակ. - Որքան թշուառ մէկն ըլլայ, այնքան բարիք մեծ պիտի ըլլայ: Յաճախողներէդ աւելցուքներ չեն պակսիր: Շուններն իսկ կը կշտացնես. այս խեղճը չունե՞րէն ալ վար է:

Արիստակես. - Արմենակ, խնդրեմ ետ տար. ես արջ խաղցնելու ժամանակ չունիմ: Այնքան ալ խոշոր է որ եղան կը նմանի: Ի՞նչպէս հետը խօսիմ, ոտքերո՞վ, դիտո՞ւ թէ ձեռքերով:

Արմենակ. - Ոչ, ուշիմ մէկն է. Աստուած լեզուն առեր է, բայց խելք տուեր է: Փոքրիկ նշան մը կը բաւէ հասկցնելու համար: Բառերը չթնեցուց վրայ կը կարդայ: Դուն վարուել զիտես, հազարաւորներ ձեռքէդ անցեր են:

Արիստակես. - Եղբայր, յաճախորդներս պիտի փախցնէ: Ետ տար, ուրկէ որ դուրս հոն նետէ:

Արմենակ. - Այդպէս մի՛ ըսեր, Արիստակես: Մարդ մարդու պէտք կ'ունենայ: Անօթի չունն իսկ մարդ իր դռնէն չի վըռնտեր: Իրեն յանձնէ մաքրել՝ սենեակներ, սեղաններ, ախոռներ: Ծանր դործերը սիրով կ'ընէ, ուժով է, մի՛ վախեր, ո՛րքան կ'ուզես բեռ դիր վրան:

Արիստակես. - Բայց ո՞ւր դուրս այդ փորձանքը. հետը ի՞նչպէս խօսեցար:

Արմենակ. - Ըսի, չէ՞. փողոցի մէջ մօտրած դուայ. անշուշտ պալատներէն չբերի:

Արիստակես. - Եւ ինձի պէս խեղճ մէկը դուրս որ աղքատին բարիք ընէ: Հարուստներուն տար, պալատները տար:

Արմենակ. - Աղքատին ըրած. բարիքն աւելի հաճելի է Աստուծոյ. յիշէ Աւետարանի այրիին լուծան:

Արիստակես. - Ո՞ւրտեղացի է:

Արմենակ. - Զոհ է:

Արիստակես. - Ի՞նչ ըսիր. Զոհ է:

Արմենակ. - Այո՛, Զոհ է:

Արիստակես. - Ատ ի՞նչ աղղ է, ո՞ւր կը դառնուի:

Արմենակ. - Հայ է, եղբայր, Գողթնացի է:

Արիստակես. - Զըսե՞ս թէ Գողթնացի է: Ատոնց լեզուն ստատանա՞ն ալ չի հասկընար, ո՛ւր մնաց խուլ եւ համարի մը քսածները հասկնալ:

Արմենակ. - Բերնէդ ձայն հանելու պէտք չունիս, միայն չթնեցնե՞ր շար-

ժէ, պիտի դարձանա՞ս թէ ինչպէս բառերը կը յափշտակէ:

Արիստակես. - Գողթնի լեզուն չեմ սիրեր. բայց սքանչելի զինի ունին եւ լաւ կը նուազեն: Ես ունիմ ատոնց զինիէն, դաւաթ մը լեցնեմ եւ խմէ. դրամի մասին մի՛ մտածեր, դուն մերն ես:

Արմենակ. - Ուրեմն խնդրանքս կատարուած է, այնպէս չէ՞:

Արիստակես. - Է՛հ, անկիւն մը կու տանք, ուժով մէկը կը տեսնուի. տիկերը, սեղանները կրնայ մինակը տեղէ տեղ փոխադրել: Միայն թէ կիներուն աչք չտնկէ, հոս շատ կու գան, կ'երթան:

Արմենակ. - Ոչ, կասկած մի՛ ունենար, աստուածավախ մէկն է, միշտ ժամ կ'երթայ: Սքանչելի յատկութիւն մ'ալ ունի, եղնիկի պէս նազիկ կը պարէ:

Արիստակես. - Ասկէ վերջ երբ զինովները զիս պարելու քաջքնն, զինքը մէջտեղ կը նետեմ:

Արմենակ. - Հա՛, տեսա՞ր, ա՛լ խաղալիկ չես ըլլար:

Արիստակես. - Անունը ի՞նչ է:

Արմենակ. - Արփաքաղ: Անուններ կան որ մարդուս հետ կը ծնին:

Արիստակես. - (Խնդալով) Փու... փիղի անուն է:

Արմենակ. - Է՛հ, մարմնով յաղթանդամ է, անունն ալ վրան լաւ փակած է:

Արիստակես. - Ուրեմն թաս մը զինի չե՞ս առներ:

Արմենակ. - Ոչ, չնորհակալ եմ. պէտք է չուտով մեկնիմ. զինուորական ենք, դիտես, մեր ժամերը մերը չեն (Սամուելին կամացուկ): Արթուն եւ ուշադիր: (Արմենակ կը մեկնի):

Արիստակես. - Փորձենք սա արջին հասկըցնել որ սեղանները մաքրէ, շտկէ (ձեւեր կ'ընէ):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Արիստակես, Սամուել եւ Զարուհի:

Զարուհի. - (Խառնակ մագերով եւ շատ ջղագրգիռ, դուրսէն նշարով) Լիրբեր, անամօթներ, չուներ, հողը մտնէք:

Արիստակես. - Ի՞նչ կայ, Զարուհ, աշխարհս վրա՞դ փլաւ, ինչո՞ւ կը ճուսա:

Զարուհ. - Տունս փլաւ, տունս: Վարդի պէս աղջիկս, Վարդուշը քաջցին տալին պարսիկ զինուորները: Աս ի՞նչ դեբութիւն է, մեր հողին վրայ, մեր տանը մէջ իսկ ապահով չենք: Որո՞ւ գիմեմ, ո՞ւր երթամ (ձեռքերը ծուկներուն զար-

նելով)։ Վախ աղջիկս, վարդուշ, դրախտի ծաղիկ։

Արիստակէս. — Մերտ բեր որ դիմանայ. այս քանի՞ քանակ անգամն է որ խեղճ մայրերը մաղերնին փետտելով խելակորոյս պիտի ճուռն։ Օր չ'անցնիր որ քաղաքին մէջ ողբ ու կոծ չլսուի։ (Դառնալով Սամուէլին, որ սեղանները սրբելով գրադած է)։ Էյ, երանի՜ քեզի որ ոչ կը լսես, ոչ կը խօսես։

Զարուհի. — Ի՞նչ կ'ընեն մեր իշխանները. չե՞ն տեսներ ժողովուրդին վիճակը։

Արիստակէս. — Մեր իշխանները դեղեակներու մէջ ուրախութիւն կ'ընեն. կան որ պարսիկներէն աւելի գէշ են, կրակապաշտ դարձեր են, այդ լիբերերուն ընկեր եղեր են։

Զարուհի. — Խեղճ հայ ժողովուրդ, խեղճ հայ ժողովուրդ, դանակը ոսկորիդ հասաւ եւ դեռ կը համբերես մարտիրոսի պէս։

Արիստակէս. — Աս այսպէս չ'երթար, համբերութիւնն ալ սահման ունի, ժողովուրդներու կեանքին հետ չեն խաղար։ Ահաւոր փոթորիկ մը պիտի ելլէ, բայց ե՛րբ, չեմ գիտեր։

Զարուհի. — Ո՞ւր է վարդան Մամիկոնեանը, որուն սուրէն, կ'ըսեն, աշխարհս կը սարսափի։

Արիստակէս. — Է՛հ, երբոր գողը տունէն է՝ եղբ երգիքէն կը տանին, կ'ըսեն մեր գիւղացիները։

Զարուհի. — Ուրեմն երթամ գերեզման՝ մտնեմ։

Արիստակէս. — Աւելի լաւ է քան այս անպատիւ կեանքը։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Արիստակէս, Սամուէլ, Զարուհի, Վրէժ, Լիա։

Վրէժ. — (Բեմ գալով) Արիստակէս, դինի բեր, կեցցէ՛ մեր բանակը. խմե՛նք իր կենացը։

Զարուհի. — Ո՞ր բանակին, բանակ մընաց, պատիւ մնաց. մենք մեր հողին վերայ, մեր տանը մէջ գերիներ ենք։

Վրէժ. — Ձլեցի՞րք։

Բոլորը. — (Բացի Սամուէլէն) Ի՞նչ բան։

Վրէժ. — Լեցուր թասին մէջ փրփրոտ դինին որ ըսեմ։

Զարուհի. — Դուն մեր ցաւը ծաղրելու եկեր ես։ Սուտ հերոսներ, սուրը կախած՝ փողոցները կը շրջիք, իսկ պարսիկ դին-

ուրները տունները կը բռնաբարեն. աղջիկս կը տանին եւ ձեզմէ մէկը չկայ որ անոնց գլուխը ջախջախէ։

Վրէժ. — Գնա Վասակէն ուղէ աղջիկդ։ Մենք հրաման չունինք պարսիկ զինուորներուն դպչիլ։

Զարուհի. — Վասակը... մեր մարդպա՞նը։

Վրէժ. — Այո՛, իր խիստ հրամանն է։ Արիստակէս. — Վրէժ, լեզուդ քեզի քաշէ, պատերը ականջ ունին։ Քարերն անգամ լրտեսութիւն կ'ընեն։

Վրէժ. — Լաւ, լաւ. սա Գողթնի գինիէն բեր որ հիանալի լուր մը տամ։

Արիստակէս. — (Նշան կ'ընէ Սամուէլին որ գինի բերէ)։

Վրէժ. — Լեցուր մինչեւ բերանը։ (Սամուէլ ջուր կը լեցնէ) Ի՞նչ, վրա՞ս կը խնդաս։ Ես գինի կ'ուզեմ, դուն ջուր կը բերես։

Արիստակէս. — Ի՞նչ ընեմ, ծառաս խուլ եւ համր է. ջուր ուզեմ՝ աւել կը բերէ. աթոռ ուզեմ՝ թաս կը բերէ։

Վրէժ. — Ներկայ ժամանակներուն մէջ խուլ եւ համր ըլլալը բախտաւորութիւն է, բայց ոչ գինիի թասին մէջ։

Արիստակէս. — (Դէպի ներս) Լիա, փառչով գինի բեր։

Լիա. — (Ներսէն) Զո՛ւտ թէ խառն։

Արիստակէս. — Խառն։ (Դառնալով Վրէժին) Եթէ շիտակ ըլլայ տալիք լուրդ, Գողթնի գինիէն կու տամ եւ տասնհինգ տարուան գինի։

Վրէժ. — Եղբայր, սուտ խօսելու ի՞նչ հաշիւ ունիմ։

Արիստակէս. — Լիա, ըսածս բեր։

Վրէժ. — Դանակը մեր ոսկորին հասաւ։

Զարուհի. — Մեր սրտին հասաւ, ըսէ։

Վրէժ. — Սրտին ալ հասաւ, փորին ալ հասաւ։ (Լիային) Լիա, լեցուր սա գինին։

Լիա. — Աս գինին կեանքիդ մէջ չես խմած։

Վրէժ. — Մանաւանդ երբ քեզի պէս մէկը կը լեցնէ։

Զարուհի. — Բոլորդ նոյն անամօթներդ էք։

Վրէժ. — Քաւ լիցի, բերանս կը սրբեմ։

Կեցցէ՛ մեր յաղթական բանակը (կը խմէ)։

Զարուհի. — Որ դատարկ փողոցները կը թափառի...

Լիա. — Ես պիտի ըսէի, ո՞ր յաղթանակին համար։

Վրէժ. — Անգղ գիւղի յաղթանակին համար։

Արիստակէս. — Նայէ՛, գինիս խմելու համար սուտեր չչինես։

Վրէժ. — Ո՛ւ, Յաղկերտին կոյր աչքը վկայ։ Մտի՛կ ըրէք։ Երկու շաբաթ առաջ Անգղ գիւղը կը հասնին տասը հազար պարսիկ զինուոր եւ չուրջ հազար մոզեր, մեր քանի մը նախարարներու առաջնորդութեամբ։ Իրենց բանակը լեռ ու ձոր կը բռնէ։ Կիրակի օր մը մոզերը իրենց սըրբազան կրակը ուսերնին առած՝ կ'ուզեն եկեղեցի մտցնել։ Երգով թմբուկով կը մօտենան։ Ժողովուրդը հոն խոնուած է, Ղեւոնդ Երէցը պատարագի է։ Դրան առջեւ վախասուն մըն է որ կը փրթի։ Դուրս վտարեցէք, կը պոռայ Ղեւոնդ Երէցը խորանէն։ Աղմուկը կը հասնի մօտակայ գիւղերը։ Բահեռով, բրիչներով, բերիներով զինուած ժողովուրդը կը յարձակի մոզերուն վրայ։ Կրակամանը ոտքի տակ կ'առնեն, մոզերու գլուխները կը ջարդուին։ Հայ բանակը կը միանայ, ա՛լ քիթ, աչք, բերան չեն նայիր։ Հայը, գիտէք, երբ հօգին քաղուի՝ ա՛լ չի նայիր թէ ուր կը զարնէ։ Մոզերը լեղապատառ կը փախչին. պարսիկ զինուորները սարսափած՝ կ'ուզեն իրենց երկիրը դառնալ։ Եւ կ'ըսեն թէ ամէնէն կատաղիները հայ կիներն էին։ Եւ ասիկա դեռ ծայրն է. ամբողջ Հայաստանը հրդեհ պիտի առնէ։

Արիստակէս. — Խմէ՛, եղբայր ոչ մէկ դրամ չեմ ուզեր։ (Դառնալով Լիային) Լիա, դուտէն բեր։

Զարուհի. — Փառք քեզ Աստուած, իմ վրէժս ալ առեր են։ Ա՛խ, այդ աղջիկս փախցնող սրիկաները մէյ մը ձեռքս իյնային, եղունգներով աչքերնին կը փորէին։

Լիա. — Եթէ պատերազմ ըլլայ, սիրով կ'երթամ վիրաւորներ դարմանելու։

Վրէժ. — Ամբողջ Արտաշատը յուղումի մէջ է։ Նախարարները իրարու կ'երթան ու կու գան. ոմանք պատերազմ կ'ուզեն, ուրիշներ՝ անխոհեմութիւն է, կ'ըսեն, համբերենք լաւ օրերու. եւ ասոնց գլուխը Մարգարէն է։

Զարուհի. — Դանակը մեր սիրտը մտաւ ու նորէն համբերենք։ Ես Վասակը չեմ ճանչնար, չեմ գիտեր ինչ մարդ է։

Բոլորը. — Մենք ալ չենք ճանչնար։

Զարուհի. — Բայց այս հողը, այս երկիրը՝ իրմէ աւելի ժողովուրդին կը պատկանի, եւ ոչ ոք իրաւունք ունի մեզ եւ մեր պատիւը օտարին ծախել։

Վրէժ. — Ըսէ՛ք հիմա, արդար չէ՞ր Անգղի ապստամբութիւնը։ Ահա մայր մը, ու-

րուն սիրտը դանակ խոթեր են. եւ դեռ քանի՜ հազարներ կան որ կը սպասեն արդար վրէժի։

Զարուհի. — Լաւ է մեռնիլ, քան թէ ոչ-խարի պէս ապրիլ։

Լիա. — Մոզերս ալ կու տամ աղեղի լար շինելու համար։ Մեր կեանքը թանկ է, թող լաւ գիտնան պարսիկները եւ ուրացողները։

Արիստակէս. — Լիա, բեր սա Գողթնի տասնհինգ տարուան գինիէն։ Ես չեմ կրնար արիւն տեսնել, բայց բոլոր մահաւաններս կը պարպեմ մեր զինուորներուն տալու համար։

Լիա. — (Գինին բերելով) Ես պիտի լեցնեմ բոլորին գաւաթները (նշան լնելով Սամուէլին). դուն ալ խմէ, թէպէտ դեռ քախտ ես, խուլ եւ համր, բայց մեր արիւնէն ես, խմէ՛։

Վրէժ. — Խմենք ազատութեան եւ յաղթանակի կենացը։

Զարուհի. — Մա՛հ պարսիկներուն։

Արիստակէս. — Եւ իրենց պիղծ կրակին։

Լիա. — Եւ իրենց կոյր թագաւորին։

Վրէժ. — Կեցցեն Անգղ գիւղին հերոսները...

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

Վասակ եւ վերիները

Վասակ. — (Ծպտուած) Պոռացէք, կանչեցէք, հայհոյեցէ՛ք վատեր։ Հերոս էք բաժակ մը գինիի առջեւ։ Երբ պատերազմ ըլլայ՝ նապաստակներ կը դառնաք։ Անգղի մէջ քանի մը պարսիկ սպաններ են եւ յաղթանակ կը տօնեն։ Լաւ չէ՞ որ տեղերնիդ հանդարտ նստիք եւ ձեր չոր հացը ուտէք։ Յաղկերտ մըջիւնի բազմութեամբ բանակներ ունի, մէկ օրուան մէջ կը սրբէ, կը ջարդէ ամբողջ հայութիւնը։

Անիւիք յեղափոխութիւնները ազգերը ջնջելու կ'առաջնորդեն։ Քանի մը տաք գլուխ մարդիկ մոլեռանդ քահանայի մը խօսքերով կրակ նետեցին մեր տան մէջ։ Դե՛հ, խմեցէք Անգղ գիւղի հերոսական յաղթանակին կենացը, վաղը ձեր կիները, աղջիկները ձեր պիտի չըլլան։

Վրէժ. — (Արիստակէսին) Ո՞վ է այս մարդը։ Թափառական ասպե՞տ մը։ Անոնցմէ՞ է։

Արիստակէս. — Ասոր պէս պարծենկոտներ հիմա չտու կան։ Խօսքերէն դատելով՝ անոնցմէ պէտք է ըլլայ։

Վասակ. - (Արիստակեսին) Դո՞ւն ես պանդուկապեմ:

Արիստակես. - (Խոնարհ շեշտով) Այո՛, ես եմ:

Վասակ. - Փարչ մը լեցուն Գողթնի դի- նիէն՝ բեր եւ երկու բաժակ: Ես ալ խմեմ Հայոց թագաւորութեան կենացը: (Քիչ մը ապրիմ անդին նայելով) Ինչո՞ւ ապշած կը նայիք, չէ՞ք հաւատար: Այո՛, Հայոց թագաւորութեան կենացը: Մէկը կայ որ կը խորհի եւ կարող է Հայաստանի թագը կապել, եւ այդ մէկը... Վասակ Սիւ- նին է:

Զարուհի. - Բարեկամ, մենք քեզ չենք ճանչնար. անշուշտ հայ ես, եւ թերեւս լաւ հայ. Հայաստանի թագը կանգնելու համար գէնք առ եւ Անդր դիւղը գնա. թաւ մը գինիի առջեւ դո՞ւն ես սուր չո- դացնող: Ասիկա քեզի կ'ըսէ մայր մը, որուն սիրտը դանակ խոթեցին անօրէն պարսիկները:

Վասակ. - Երբ անխելք զօրավարի մը եւ մոլեռանդ քահանայի մը ձեռքն է Հա- յաստանի բախտը, դեռ մայրեր կու լան: (Արիստակեսին) Գինեպան, դուրս ըրէ այս ոտմիկները. նողկանք կը զգամ հե- տերնին խօսելով: Հիմա իմ բարեկամս պիտի գայ եւ միայն մենք պիտի վայելենք այս պարտէզին անոյշ օդն ու գինին: Լեռ- ներու վրայ վայրի դաղանի պէս թափա- ուելէն յողնած ենք: Ա՛ռ սա ոսկի դահե- կանք: Մինչեւ որ հոս եմ՝ ոչ ոք ներս մտնէ:

Արիստակես. - (Դրամն առնելով ափին մէջ՝ մեծ խոնարհութեամբ) Վրէժ, մեծ մարդ պէտք է ըլլայ: (Դառնալով Վասա- կին) Բայց տէր իմ, ասոնք պատուաւոր մարդիկ են:

Վասակ. - Պատուաւոր մարդիկ. ո՞ր պատիւը մնաց. տուն ունին՝ որ իրենցը չէ. կին, աղջիկ ունին՝ որ իրենցը չեն: Ի՞նչ պատիւ կը փնտռես: Եթէ ըսես թէ Հայոց թագաւորութիւնը պիտի կանգնի, ապուշ ապուշ երեսդ կը նային: Դուրս ըրէ. ասոնք մարդ իսկ կոչուելու արժա- նի չեն:

Արիստակես. - Երթանք, հայրենակից- ներ. ասոնք լեռնային խենթեր են. սպան- նել, կողոպտել սորվեր են: Չես ալ դի- տեր թէ ի՞նչ ազգի կը պատկանի:

Վրէժ. - Եթէ գէնքերս քովս ըլլային, ես կը մենամարտէի այդ...:

Վասակ. - Դո՞ւն, դո՞ւն. գնա՛ եթէ կեանքդ կը սիրես: Պատուաւոր մահը ա-

մէնուն համար չէ: Դուրս կը քչէ բոլորը (կը մեկնին):

Վրէժ. - (Մեկնելով դրամ վրայ) Կը տեսնուիք երբ ընկերներս դան:

Արիստակես. - (Ինքնին) Շատ մեծ մարդ կը տեսնուի:

Վասակ. - Գինեպան, քու անունդ ի՞նչ է:

Արիստակես. - Արիստակէս է, տէր իմ. ձեր ծառան եմ:

Վասակ. - Քեզի պէս ծառաները ախող կը կապեմ: Աս մարդն ալ շատ ուշացաւ:

Արիստակես. - Արդեօք մէկո՞ւ մը կը սպասէք:

Վասակ. - Քու բանդ չէ որուն կը սպա- սեմ: Աս մարդը ո՞վ է:

Արիստակես. - Ծառաւ է, տէր իմ. խուլ եւ համր է. ողորմութեան համար քովս առած եմ:

Վասակ. - Իսկ այն աղջիկը:

Արիստակես. - Մեր սպասուհին է:

Վասակ. - Սպասուհիդ տուն քչէ. եթէ պէտք ըլլայ՝ այդ խուլ եւ համրը թող ծառայէ:

Արիստակես. - Ծառայ եմ ձեր հրաման- ներուն:

ՏԵՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Շապուհ, Վասակ, Սամուէլ:

Վասակ. - (Շապուհին որ բեմ կու գայ) Քեզի կը սպասէի: Ժամանակները թանկ են: Հոս կանչեցի որ ազատ ըլլանք: (Ա- րիստակեսին) Դուն դործիդ գնա: Հոս կանչեցի, որովհետեւ հասարակաց տեղ է. ոչ ոք կրնայ կասկածիլ կամ հետա- պնդել մեր հանդիպումը: Այդ սեւազգեստ քահանաները, Վարդան ամէն կողմ լըր- տեսներով լեցուցեր են: Շուքի պէս կը շրջին, կասկած առեր են: Եթէ պետական պալատը կանչէի ամէն մտնող ելող մեզ պիտի տեսնէր: Զիս բոլորն ալ կը ճանչ- նան, իսկ հոս բոլորովին անձանթներ ենք:

Շապուհ. - Լաւ խորհեր ես հոս ժամա- դրուելու: Ես ալ ծպտուած եկայ, պա- հաններս անգամ հեռացուցի որ կասկածի առիթ չտամ: Թագաւորէն եւ Միհրնե- ր-սէնէն շատ ողջոյններ: Հաւատարմու- թիւնդ եւ ըրածներդ մեծ արձագանդ գը- տան Տիրգոնի արքունիքին մէջ: Անունդ ամէնուն բերանն է: Հայաստանի մէջ, կ'ըսեն, մէկ հողի կայ պատուաւոր եւ վստահելի: Վասակ մարդպանը: Թագա-ւորը ամբողջ աւազանիւն առջեւ երդում

ըրաւ քեզ իր երկրորդն ընել եւ Հայաս- տանի թագը շնորհել: Ես ահանջովս լը- սեցի:

Վասակ. - Որո՞ւն ծանօթ չէ արքայից արքային վեհանճնութիւնը: Աստուած մ'է. երբ խոստանայ՝ կը կատարէ:

Շապուհ. - Անդր դիւղի դէպքը շատ խռովեց մեր թագաւորը: Մոգպետն ամ- բողջ յանցանքը քու վրադ ձգեց. բայց ի- մասաւուն Միհրնեքսէն գինքն հանգարտե- ցուց, ըսելով թէ այդ անխելք ապստամ- բութիւնը հայերու դատապարտութիւնը պիտի ըլլայ: Իրաւունքով դիրենք կը պատժենք. ո՛չ Հոռոմները, ո՛չ Հոնները կրնան մեզ մեղադրել եւ ջարդարարներ անուանել:

Վասակ. - Ապրի Միհրնեքսէն. ճիշտ ալ այդպէս է: Ասոնք չեն դիտեր թէ տա- կաւին իրենց դիւտուն ինչ բաներ պիտի դան: Արքայից արքան զայրացնել՝ կը նշանակէ աստուածները բարկացնել: Վարդան ի՞նչ կը կարծէ ինքզինքը. հե- րոս է պարսիկ բանակով, իսկ հիմա՝ ա- պրստամբ մը, աւազակապետ մը, մըջին մը պարսկական ուժին դէմ:

Շապուհ. - Կացութիւնը յուզումով չնկատենք: Դժուար է տիրել երկրի մը՝ ուր ամբողջ ժողովուրդը ոտքի ելած է: Կին, տղայ, ծեր, երիտասարդ զինուոր կը դառնան: Ամէն տուն բերդի կը վերած- ուի, ամէն քար՝ գէնք, ամէն երկաթ սուր կ'ըլլայ: Դուն ես Հայաստանի մարդպա- նը. մեր յաջողութիւնը քեզմէ կը կախ- ուի. ընտրէ՛, թագ՝ կամ մահ:

Վասակ. - Ես արդէն ընտրած եմ, ա- մենազօր արեւն՝ աստուած, եւ Յաղկերտ՝ մեր տէրը (ծոցէն քուլք մը հանելով): Ուրեմն տես. Արտաշատի ժողովին մէջ որոշուեցաւ ամէն գնով դէմ կենալ թա- գաւորին հրամաններուն: Վարդանի ջերմ կողմնակից ինք նախարարներ կան. ու- ըրիչներ տատամսոտ են. կան ալ որ բռն ճակատակորդներ: Իրենց զինուորական ոյժը մեծ բան մը չէ: Ես պիտի ջանամ այդ ոյժն ալ ջլատել. զօրաբանակ մը Զա- րեւանդ պիտի զրկեմ, ուրիշ զօրաբանակ մը, եթէ յաջողիմ Վարդանն ալ միասին՝ պիտի զրկեմ Կովկաս: Իսկ Հայաստանի սիրտը իմ ափիս մէջ կը մնայ. կը սեղ- մեմ, կը ճգմեմ անաստղները ինչպէս որ կ'ուզեմ:

Շապուհ. - Հիանալի ծրագիր է:

Վասակ. - Մեր հետն ունինք լաւագոյն դուռները: Ես սիւնեաց զօրաբանակով թիկունքէն կը յարձակիմ, երկու սուրի

մէջ կ'առնենք եւ մարդ չ'ազատիր:

Շապուհ. - Ես ալ չեմ դիտեր թէ ո՛ւր պիտի պատահի երկու բանակներուն հան- դիպումը:

Վասակ. - (Սամուէլին ձեռքէ գինի բերելով) Պէտք է դաշտային տեղ մը ըլ- լայ որ փրկերուն եւ ճիւղեր բանակին շարժումներն ազատ ըլլան: Եթէ պարսիկ բանակը Հեր եւ Զարեւանդ նահանգէն մտնէ Հայաստան, շատ հաւանական է որ հանդիպումը Աւարայրի կողմերը ըլլայ: Զինուորական ժողովին մէջ ալ այդպէս որոշուեցաւ. թշնամին կեցնել սահմանին վրայ:

Շապուհ. - Ո՞րքան ոյժ կրնան ունենալ:

Վասակ. - Իմ զօրաբանակովս չուրջ հարիւրքսան հազար զինուոր, սակայն իրենց քով հազիւ յիսունէն վաթսուն հա- զար պիտի մնայ: Գէշ զինուած են: Շա- տերը պատերազմի անվարժ: Զինուորա- կան պարէններու մեծ մասը արդէն Սիւ- նիք փոխադրած եւ պահած եմ:

Շապուհ. - Բուն ճակատամարտի մը համար դեռ ժամանակ կայ. դէպքերը չեն հասունցած. յոյս կայ հպատակեցնել զի- րենք: Բայց դուն ջանա ջլատել Վարդանի ոյժերը, մեր կողմը քաշել տատամսոտնե- րը, փառասէր նախարարներուն դրամ եւ պատիւ խոստացիր. ուրացողները պաշ- տօնի կանչէ. սպանաւոր, ոսկի թափէ, մինչեւ որ այդ գոռոզ Մամիկոնեանը կա՛մ խոնարհի եւ կամ յուսահատ՝ օտար երկիր երթայ:

Վասակ. - Զինուորական խորհուրդի ա- տեն՝ նախարարներու անմիաբանութենէն յուսահատ, ուղեց հեռանալ, սակայն այդ սեւազգեստները զինքը համոզեցին, ետ բերին եւ խառնիճաղանձին զօրավար դը- րին: Այս երկրին չար ողին այդ Ղեւոնդ Երէցն է. լեզուն բերնին մէջ ջաղացքի քարի պէս կը դառնայ: Ամբոխավարին մէկն է: (Սամուէլ գինի կը բերէ եւ գա-ւաքներուն մէջ կը լեցնէ շատ դանդաղ):

Շապուհ. - Քու կողմը քահանաներ չունի՞ս. դրամ, պատիւ, կաթողիկոսու- թիւն խոստացիր: Եկեղեցիները այցելէ, բարեպաշտ ձեւացիր, վանքերուն հողեր բաշխէ: Երբ պէտք է՝ անոնց Աստուածն ընկեր առ. երբ պէտք է՝ աստանան ընկեր ըրէ. որեւէ միջոցի խտրութիւն մի՛ գնիր. զիմացդ փառաւոր թագաւորութիւն մը կայ:

Վասակ. - Մեր կողմն ալ ունինք քա- հանաներ. Պետրոս, Զանդակ, Շմուէլ. սակայն այնքան անպատիւ են որ մարդ

վրանին համարում չունի: Շմուշին արդեն ասորի է, ատոր երեսն ալ չեն նայիր: Ես անգամ կ'ամհամ այդ վատերէն:

Շապուհ. - Այդպիսի տիպարներն օգտակար են. անոնք դրամի համար ամէն դոյն կ'առնեն: Բերդը ներսէն դրաւելու է: Հայ ժողովուրդը կուրորէն կը հետեւի իր կղերին: Տես այդ թիզ մը հասակով Ղեւոնդը՝ ամբողջ Հայաստանը իր ափին մէջ առած է: Ով գիտէ Վարդան ինչ խոստացած է իրեն: Ըսէ որ ծածուկ գործեն, տունէ տուն շրջին: Լսած եմ որ Զանգակ քահանան շատ ճարպիկ է:

Վասակ. - Ճիշտ է, մէջերէն ամէնէն ճարպիկն է. ոչ մէկ բանի չի հաւատար. ոչ մէկ աստուած չ'ընդունիր. սակայն ժողովուրդը ժանտախտի պէս իրմէ հեռու կը փախչի: (Ականջէն) Ինծի խոստացաւ Վարդանը թունաւորել, երբ սրբազան հացն ուտեն: Սատանան իսկ այդքան չէր կրնար խորհիլ:

Շապուհ. - Տեսա՞ր որ կրնայ օգտակար ըլլալ. յաճախ մէկ մարդ ամբողջ բանակի մը դործը կը տանէ: (Դուրսէն պարտէզին դուռը կը ծեծեն):

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Արիստակէս, Սամուէլ, Լիա, չորս հայ զինուորացի:

(Դուրսէն նուագի ձայնը):
Վասակ. - Արիստակէս, ո՞վ են ասոնք, դռները չբանա՞ս:

Արիստակէս. - (Տունէն դուրս վազելով) Հայ զինուորներ են, տէր իմ:

(Դուրսէն դուռը բացելով) Արիստակէս, բա՛յ դուռը:

Վասակ. - Մի՛ բանար:

Արիստակէս. - Տէր իմ, ասոնք խենթ երիտասարդներ են, հիմա դուռը կը կոտրեն եւ ներս կը մտնեն:

Վասակ. - Դրան վրայ կեցիր, կռնակդ դիր: Մի՛ բանար այդ չուներուն: (Արիստակէս կռնակը դրան, երեսը դէպի ներս կը կեցայ):

Արիստակէս. - (Դուրսէն դուռը գրեթէ կը կտրեն) Տէր իմ, դուռը կոտրեցին, ներս պիտի խուժեն:

Վասակ. - (Անապարանով եւ շփոթած ոտքի կ'ելլէ) Շապուհ, երթանք: Սա դիմացի դռնէն ելլենք որ մեզ չտեսնեն:

Արիստակէս. - Այո՛, այդ կողմէն դուրս ելէ՛ք, տանս ետեւը կը հանէ:

Վասակ. - (Շապուհին) Իմ խոնարհ յարգանքներս ամենազօր թաղաւորին:

(Ելլելու ատեն, սխալմամբ, սեղանի մը վրայէն կ'առնէ Արիստակէսի հաշիւներու քուլքերը):

Շապուհ. - (Վասակ առջեւէն կը մեկնի. դրան վրայ) Ես Տիգրոն կը մեկնիմ. ամառը կը տեսնուինք: Կարգադրութիւններդ հրաշալի են: Թագաւորը շատ գոհ պիտի ըլլայ: Ո՛չ միայն մեծ քաղաքացի ես, այլեւ մեծ ռազմագետ: (Վասակ դուրս ելած է) Վա՛յ այն ազգին որ այսպիսի դաւաճաններ ունի: (Դուրս կ'ելլէ):

Սամուէլ. - (Միշտ մունջ. սեղանին վրայէն իսկոյն կը հաւաքէ մագաղաքի կրտորը եւ գրպանը կը դնէ):

Դուրսէն պտուղով) Կոտրենք սա դուռը: (Ուժով կը հրեն դուռը բացելով):

Արիստակէս. - Համբերեցէ՛ք փորձանքներ, մարդ կար. հիմա կը բանամ. (դուռը բանալով) մտէ՛ք, դրողը ձեզ տանի:

Ա. զինուոր. - Սատանան քեզ տանի, ո՞ր է իր մինչեւ հիմա:

Արիստակէս. - Կամաց, մի՛ ճուռք. երկու այնպէս մեծ մարդիկ կային որ երբեք չէի տեսած. մէկ զեղին ոսկի տուին, զեղին ոսկի:

Բ. զինուոր. - Ո՛վ որ կը վճարէ՝ մեծ մարդ է. մեր տուածը դրամ չէ՞:

Արիստակէս. - Սա վճարողին նայեցէ՛ք. դրանք միշտ ծակ է: Բոլորդ ալ նոյնն էք: Կը խմէք, թասերը կը կոտրէք. եւ կամացուկ մը փախուստ կու տաք: Արիստակէս, համբերէ, երբ որ ոռճիկ առնենք՝ կը վճարենք...: Զեղի ո՞վ ոռճիկ պիտի տայ, Վասակ:

Գ. զինուոր. - Շատ մի երկարեր, լեցուր սա թասերը:

Արիստակէս. - (Դէպի ներս) Լիա, բե՛ր այն խառն տեսակէն: (Աւելի ուժով) Լաւ զինի ըլլայ, հէ՛, ասոնք ոսկի յաճախողներ են:

Դ. զինուոր. - Ապրի՛ս Արիստակէս, միշտ վեհանք. հայ զինուորին համար կեանքդ կու տաս:

Լիա. - (Թասերը լեցնելով) Դուք կը խմէք, ուրախութիւն կ'ընէք, անդին մայրերը կու լան: Աղջիկները կը փախցնեն, տունները կը քանդեն:

Ա. զինուոր. - Ո՞վ:

Լիա. - Պարսիկ զինուորները:

Ա. զինուոր. - Անոնց ալ ասենք կու դայ. Անդը գիւղին մէջ արդէն լաւ ծեծ մը կերան:

Բ. զինուոր. - (Թասը վերցնելով) Խըմենք կենացը... Իմաստուն Վասակին:

Գ. զինուոր. - Ո՛չ, քաջ Մամիկոնեանն:

Դ. զինուոր. - Եւ Լիային կենացը:

Բոլորը. - Եւ Լիային կենացը որ միշտ պատուական զինի կը բերէ:

Բոլորը. - (Ա. զինուորին) Աշտ, աղուոր բան մը նուագէ: (Ա. զինուորը սագով կը նուագէ հայկական եղանակ մը):

Բ. զինուոր. - Կեցցէ ուրախութիւնը:

Գ. զինուոր. - Եւ Արիստակէսը:

Բոլորը. - Արիստակէս, պար մը կ'ուղենք: Դուն իսկական պարող ես:

Արիստակէս. - Ո՛չ. ես հիմա փոխանորդս ունիմ, թող ան պարէ:

Դ. զինուոր. - Քեզի պէս զեղեցիկ պարող չկայ: Ո՞վ է այդ փոխանորդը:

Արիստակէս. - Արփաքսատը:

Ա. զինուոր. - Ո՞ր Արփաքսատը:

Արիստակէս. - Այս նոր ծառաս. խուլ եւ համր է, բայց եղնիկի պէս ճկուն կը պարէ:

Բ. զինուոր. - Լաւ, բայց Լիան ալ պէտք է միասին պարէ:

Բոլորը. - Այո՛, Լիան ալ, Լիան ալ պէտք է պարէ:

Լիա. - (Նոյս տալով դէպի ներս) Ես խենթերու խաղալիկ չեմ:

Արիստակէս. - (Լիային քեւէն քաշելով դուրս կը բերէ) Աղջիկ, պէտք է հաճոյք պատճառենք ասոնց. վաղը միւս օր պատերազմի կ'երթան հայրենիքը պաշտպանելու, ո՞վ գիտէ թէ ողջ կը դառնան, չեն դառնար:

Լիա. - Պայմանով որ ամէն մէկը հինգ հատ պարսիկ սպաննէ:

Բոլորը. - Քու խօսքիդ համար տասնական ալ կը սպաննենք:

Արիստակէս. - Արտաշատի պարը նուագէ: (Ա. զինուորը կը նուագէ եւ Սամուէլ ու Լիա կը պարեն):

Բ. զինուոր. - (Պարէն վերջ) Անկցի՛ պատերազմը. ի՞նչ կ'ուղենք. զինի ունինք, երգ ունինք, պար ունինք: Հայր իշխեր է, Պարսիկը իշխեր է... մեզի համար նոյնն է:

Գ. զինուոր. - Անկցի՛ կոյր թագաւորը, որ կ'ուզէ մեր թասերը խել:

Բ. զինուոր. - Խմենք իմաստուն Վասակին կենացը որ պատերազմ չ'ուղեր:

Գ. զինուոր. - Ո՛չ, Վարդանի կենացը՝ որ հայրենիքը կը պաշտպանէ:

Բ. զինուոր. - Վասակին կենացը...:

Գ. զինուոր. - Անկցի՛ այդ մասնիչը...:

Արիստակէս. - Հիմա վրաս մարելիք պիտի դայ. ասոնք փորձանք մը պիտի հանեն:

Բ. զինուոր. - Վարդանը կ'ուզէ մեզ

պատերազմի տանիլ: Պատերազմ չենք ուղեր. Թաս մը գինին ամէն ազատութիւն կ'արժէ:

Գ. զինուոր. - Վայ անոր որ Վարդանի դէմ կը խօսի: Ես իր բանակէն եմ, հերոսներու հերոսն է. կեցցէ՛ Վարդան եւ իր բանակը:

Բ. զինուոր. - Անկցի՛ պատերազմի հրճիչը:

Գ. զինուոր. - Եթէ չես ուղեր որ դուրսից թռչի, ընկեր, լաւ է որ լռես. այս սուրը շատ զուլիսներ հնձած է:

Բ. զինուոր. - Ես ոչ մէկ սուրէ կը վախճամ:

Գ. զինուոր. - Բա՛յ սուրդ՝ եթէ քաջ ես:

Բ. զինուոր. - Բացուցէ՛ք, ասոր դասը տամ (մեկնաւարտելու կ'ըլլան):

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Արմենակ եւ վերինները, յետոյ Արշակ:

Արմենակ. - (Յանկարծակի բեմ ելլելով) Ետ տարէ՛ք այդ սուրերը:

Բոլորը. - Տեղակալ Արմենակը...

Արիստակէս. - Լեզիս փրթաւ. աղէկ վրայ հասաւ:

Արմենակ. - Ուրեմն Թաս մը գինիի համար մեռնի՞ ազատութիւնը:

Զինուորները. - (Ետ ետ քաշուելով եւ իրարու երեսնայելով. ցած) Քիչ մը դուրսից տաքցեր էր:

Արմենակ. - Վատե՛ր, եւ դուք հայրենիքը պիտի պաշտպանէք: Թաս մը գինին ձեզի համար ամէն ինչ է: Անդը գիւղին մէջ ձեր մայրերը, քոյրերը, կիները պատերազմի ելեր են, իսկ դուք հոս, դաւաթ մը գինիի առջեւ ընկեր ընկերով դէմ սուր կը քաշէք:

Գ. զինուոր. - Գնդապետ, ես Վարդանի բանակին մէջ կուռած եմ:

Դ. զինուոր. - Ես Գուշաններուն դէմ պատերազմած եմ:

Ա. զինուոր. - Ես տակաւին պատերազմ չեմ տեսած:

Արմենակ. - (Մատը ցցելով Բ. զինուորին դէմ) Իսկ դուն՝ դուն ընկերովդ դէմ դէմ կը բարձրացնես: Քեզի համար Պարսիկը աւելի վեր է քան Հայը, այնպէս չէ. լաւ է չլթան վիզդ գերի ըլլալ, քան այս հողին սուրը հացն ուտել եւ ազատութիւնը վայելիլ:

Արշակ. - (Յիսուսի մօտ մէկը. գլուխը ցնցելով եւ դանդաղելով. դուրսէն կը լրսուի ձայնը եւ ներս կու գայ) Նազենիկ, ա՛խ Նազենիկ, սրտիս վարդը, հողիս

լոյսը: Նաղենիկ, գէթ չերեմդ գրկէի, հողիդ հետ հող ըլլայի. քարն ըլլայի դամբանիդ:

Արիստակէս. - Խեղճ մարդ, ամէն անգամ այսպէս հառաչելով պանդուկս կու գայ: Պարսիկ զինուորներ իր միակ աղջիկը յափշտակեալ տարեւ են. հիմա մարդ չունի աշխարհիս վրայ:

Արմենակ. - Կը լսէ՞ք ինչ բաներ կը պատահին, ի՞նչ ողբերգութիւններ կան մեր տուններուն մէջ:

Արշակ. - (Գրեթէ խենք) Դուն գիտե՞ս, աղնի սպայ, ո՞ւր տարին իմ նաղենիկս: Դեռ փոքրիկ էր, հազիւ տասնվեց տարեկան, ափիս մէջէն կ'ուռէր իր հացը:

Արիստակէս. - Ինչո՞ւ մահը չի գար հանդիստ տալու այս թշուառներուն:

Արմենակ. - Ո՞ր ցաւած սիրտը դերեղմանին մէջ հանգիստ ունի: Ո՞ր դերի աղջը աշխարհիս մէջ անուն ունի:

Արշակ. - (Դառնալով զինուորներուն) Դունք ըսէք, բարի մարդիկ, Նաղենիկս տեսա՞ք. չանցա՞ւ արդեօք այս տեղերէն լուսնկային հետ, կամ արեւուն ձեռքէն բռնած:

Արմենակ. - Ի՞նչ սարսափի օրեր կ'ապրինք: Երկիր մը ունինք որ մերը չէ. տուն ունինք՝ առանց հանգիստ սիրոյ. բնականօրէն ունինք՝ առանց երջանկութեան: (Դառնալով Արշակին) Բարի մարդ, սիրտը ամուր բռնէ. անպայման պիտի գայ այն օրը որ հէգ աղջկանդ վրէժը լուծուի:

Արշակ. - Տուր ձեռքդ համբուրեմ, սիրտը համբուրեմ: Այդ օրը Նաղենիկիս դերեղմանը վարդերով պիտի ծաղկի:

Արմենակ. - Դէ՛հ, թաս մը գինիին առջեւ եղբայր եղբոր թող դանակ քաշէ: Գաւթին մէջ թող խեղդուի աղատութիւնը:

Բ. զինուոր. - (Արմենակին) Տարի մը եղաւ որ զինուոր եմ եւ դեռ ոռճիկ չեմ ստացած:

Արմենակ. - Որովհետեւ Պարսիկները կողոպտեցին մեր երկիրը՝ ուրացողներուն տալու համար. իսկ զինուորն ու պարկեշտ մարդիկ սովահար մնացին:

Դ. զինուոր. - Տանս մէջ զաւակներս անօթի են, զրպանս կէս դահեկան իսկ չկայ: Մինչեւ ե՞րբ անօթի ղէնքի տակ պիտի մնանք:

Արմենակ. - Մինչեւ որ թշնամին հեռանայ մեր հողերէն: Օձի պէս բոյն դրած է մեր սրտին մէջ եւ մեր արիւնով կը սնանի: Նախ ծառայել՝ յետոյ պահանջել: Հեռացէ՛ք աչքերուց առջեւէն (զինուորները մէկիկ մէկիկ դուրս կ'ելլեն):

Արշակ. - Տէր իմ, թէպէտ տարիքս առած եմ, սակայն վրէժի արիւնը երակներուս մէջ կ'եռայ. զիս ալ զինուոր առ:

Արմենակ. - Գնա՛, աղնի մարդ, գնա՛: Ամէն հայ զինուոր է, երբ հայրենիքի հանդէպ իր պարտքը կը կատարէ:

Արշակ. - Ուրեմն ե՞ս ալ զինուոր եմ: Շապիկս ալ պիտի ծախեմ սուր մը գնելու համար: Արիստակէս, դուն ալ սուր մը գնէ, ապա թէ ոչ զինիներդ ալ կը տանին:

Արիստակէս. - (Արշակին ակամօք) Գինիի պարտք ունիս, չմոռնաս. հաշիւը հաշիւ է:

Արշակ. - (Պարզուած երեսով) Պարսկաստանէն երբ յաղթական վերադառնամ՝ բոլոր բոլոր ոսկի պիտի բերեմ քեզի:

Արմենակ. - (Արիստակէսին) Ա՛ռ այս ոսկի դահեկանը եւ այս աղնի մարդուն պարտքերը սրբէ:

Արիստակէս. - (Մինչեւ գետին խոնարհելով) Ոչ, տէր իմ, այդ ըսել է՛ի ուղեր: Ինչ ընենք, հաշիւները անհաշիւ դարձան, իրարու վրայ դիպեցան. մազադաթ չմընաց դերու: (Արիստակէս ջնջելով Արշակին հաշիւը) Արշակը հաշիւ չունի:

Արշակ. - (Արմենակին) Աստուած քեզ օրհնէ: Քիչ մը միտթարուած կ'երթամ (կը մեկնի):

Արմենակ. - Արիստակէս, դո՞ւ ես Արիստակէս:

Արիստակէս. - Շատ զոհ եմ. խուլ եւ համր է՝ բայց խելացի. հազիւ թէ բերանս բանամ՝ բառերը խելոյն կը յափըշտակէ: Յուլի պէս ուժով է: Տեսնէիր թէ ինչպէս նաղիկ կը պարէր իսկական գողթների մը պէս:

Արմենակ. - Ես քեզի չըսի թէ զոհ պիտի մնաս: Ամէն մարդու մէջ, որքան ալ խեղճ ըլլայ, միշտ դերեղեցիկ ձեռք մը կայ: Արիստակէս, եթէ դուն գործ ունիս՝ մի՛ քաշաւիր, գնա՛, ես հոս քիչ մը պիտի նըստիմ հանգչելու համար. թող Արիստակէս սաղը ծառայէ:

Արիստակէս. - Ձեր տան պէս հանգիստ բռնէ: (Արիստակէսին նշան կ'ընէ որ գինի բերէ) Ես բաւական հաշիւներ ունիմ. դուք հանգիստ բռնէ (կը մեկնի):

Արմենակ. - (Սամուէլին հետ առանձին) Սամուէլ, ի՞նչ նորութիւն:

Սամուէլ. - Սարսափելի բաներ:

Արմենակ. - Ի՞նչ բաներ:

Սամուէլ. - Այո՛, սարսափելի բաներ: Վասակը եկաւ Միհրնեսի պատուիրակին հետ զաղանի տեսակցելու: Յայտնեց Արտաշատի զինուորական ժողովին բոլոր

զաղանիքները: Երգում ըրաւ կռուի վարդանի դէմ, քայքայել հայկական բանակը: Երեւակայական թաղի մը փոխարէն վաճառեց հայրենիքը Յուդայի պէս: Ձեռք գիտեր ի՞նչպէս համբերեցի: Խորհեցան Ջանգակ քահանային միջոցով թունաւորել վարդանը:

Արմենակ. - Ի՞նչպէս, ի՞նչ միջոցով:

Սամուէլ. - Սատանային չըրածը այդ պիղծ քահանան պիտի ընէ, սուրբ Հաղորդութեան մէջ թոյն խառնելով:

Արմենակ. - Անիծեա՛լ, սրբապիղծ. ես ինքս պիտի սատկեցնեմ այդ հրէշը: Յետո՞յ:

Սամուէլ. - Յետոյ Վասակ առաջարկեց պատերազմը կատարել դաշտային տեղ մը, որպէսզի փրկերը եւ պարսիկ ձիաւոր բանակը ազատ շարժում ունենան: Խոստացաւ Սիւնեաց գունդերով յարձակիլ վարդանի թիկունքէն եւ երկու սուրի մէջ առնել: Գրպանէն ոլորուած թուղթ մը հանեց, ուր նշանակուած էին մեր շարժումները, դիրքերը, բանակին ոյժը, զորավարներու անունները: Գիտե՞ս հիմա ուր է այդ թուղթը... Իմ ձեռքս անցաւ:

Արմենակ. - Ի՞նչպէս, տո՛ւր նայիմ: (կարդալով) պատերազմական խորհուրդի ծրագիրն է: Դաւաճան... Դուն ի՞նչպէս ձեռք անցուցիր:

Սամուէլ. - Շատ պարզ կերպով: Երկու դաւադիրները ստիպուեցան գրեթէ խուճապահար հեռանալ: Չորս հայ զինուորները քիչ մնաց դուռը պիտի կոտրէին ներս գալու համար: Չէին ուղեր տեսնուիլ: Աճապարանքով քովի սեղանէն Արիստակէսին հաշիւները ժողովեցին ու տարին, իսկ իրենց թուղթը հոս մնաց: Առի՛ գըրպանս դրի:

Արմենակ. - Ժողովուրդը իրաւունք ունի ըսելու թէ «Սատանային ծրագրը մինչեւ կէս գիշեր կը վառի»: Ամէն բան պարզուեցաւ: Օձին գլուխը գտանք: (Սամուէլին) Դուն հոս թանկագին ծառայութիւն կ'ընես. կեցիր տեղդ: Խուլ եւ համր՝ բայց արթուն եղիր. հակէ՛ եկող զացողին վրայ:

Սամուէլ. - Անհող եղիր, ամէնէն լաւ դերասանը ես պիտի ըլլամ:

Արմենակ. - (Դէպի ներս) Արիստակէս, ես կը մեկնիմ:

Արիստակէս. - (Ներսէն) Արդեօք ուտե՛լիք, խմելիք չէ՞ք ուղեր:

Արմենակ. - (Դուրս ելլելու պահուն) Ոչ, ոչ, չնորհակալ եմ, աճապարանքով գործ ունիմ:

Սամուէլ. - (Առանձին) Եթէ մարդասպանը, աւագակը կը կախեն, ի՞նչ ընելու է հայրենիքն սպաննողը: Քանի՞ հազար անգամ պէտք է կախել: Ամէնէն սեւ հողիները շատ անգամ ամէնէն փայլուն զբոստերու տակ ծածկուեւ են, ինչպէս դալար կանաչը կը ծածկէ օձին գլուխը: Ի՞նչ խիղճ, ի՞նչ բարոյական: Սեւ հողէն չինուած են իր հողին ու մարմինը: Ի՞նչ ընէ խեղճ ժողովուրդը, երբ իր մեծերը զինքը կը դաւեն երեսուն արծաթի փոխարէն: Ո՞ր սուրբին դիմէ, ո՞ւր դարնէ իր թշուառ գլուխը. երբ ամէն քարի տակէն թունաւոր օձ մը իր գլուխը կը ցցէ: Խեղճ Հայաստան, մինչեւ ե՞րբ սիրտդ պիտի պատռեն, մինչեւ ե՞րբ խաչ պիտի հանեն ուրացող Յուդաներ: Ա՛լ կը բաւէ, ցնցէ՛ բաշերդ, կանգնէ՛ տուքի: Բաւական է, բաւական է, շատ արիւն հոսեցաւ, շատ մայրեր լացին, շատ պարանոցներ շղթայ կրեցին: (Երկայն է, դուռը կը զարնուի անսովոր ուժգնութեամբ):

ՏԵՍԻՆ ՈՒԹԵՐՈՐԳ

Վասակ, Սամուէլ, Արիստակէս, յետոյ Արմենակ:

Վասակ. - (Դուռը ծեծելով) Արիստակէս, բա՛ց դուռը:

Արիստակէս. - (Ներսէն) Ո՞վ է այս ուշ ատեն. հիմա հայհոյանք մը կը քաշեմ: Ձեռք բանար:

Վասակ. - (Դուռը աւելի ուժգին եւ արագ ծեծելով) Բա՛ց կ'ըսեմ, ապա թէ ոչ կը ջախջախեմ:

Արիստակէս. - Ծօ, շան որդի, վաղը, վաղը. չես սատկիր. այս երեկոյ ալ ծոմ անցուր. չես մեռնիր:

Վասակ. - (Անհամբեր եւ ուժգին) Բա՛ց կ'ըսեմ, ապա թէ ոչ գլուխդ երկու կ'ընեմ:

Արիստակէս. - Աւելի լաւ, երկու Արիստակէս կ'ըլլամ:

Վասակ. - Բա՛ց, բա՛ց, ոսկի մը պարզեւ կու տամ:

Արիստակէս. - Տէր Աստուած, աս ի՞նչ փորձանք է (գիշերաւոց մը հագուած, հողաքափներով կ'երթայ դուռը կը բանայ: Ո՛հ, դուք էք, մեծապատիւ տէր:

Վասակ. - (Բեմ կու գայ ձեռքին մէջ խարազան մը որ գգեստին տակ ծածկուած է) Հիմա քեզ այս խարազանին տակ կը սատկեցնեմ (խարազան մը կ'իջեցնէ): Ժամ մը եղաւ որ դուռը կը բախեմ:

ԳԵՐՊԾ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

ԱՌԱՋՆՈՐԳ. ՖՐԱՆՍՍԻՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՓԱՐԻՋ, 18 ԴԵԿՏ. 1960

Անսահման ուրախութեամբ լսեցինք աւետիսը, որ կու գար պսակելու Գերյ. Հ. Կարապետ Թ. Մ. Վ. Ամատունիի բազմամեայ անխնայ ջանքերը, ի նպաստ Ֆրանսայի հայ կաթողիկէ համայնքին:

Ճիշտ ինք տարի առաջ, 1951ի Դեկտեմբերին, Գերյ. Ամատունի կը մտնէր փարիզ, իր նորընտիր Մեծաւոր եւ Վարիչ Ֆրանսայի հայ կաթողիկէ համայնքին:

Առաքելական լայն ծրագիրներով՝ Աստուծոյ ընտրեալ սերմանացանը կը մըտնէր իր անդամատանը. եւ առաջին օրէն, ընդհանուր խանդավառութեան մէջ, հիմերը կը դրուէին կաղմակերպչական նոր դործունէութեան, Միւթարեան Միաբանութեան սիրայօժար աջակցութեամբ:

1954ին, երբ Ֆրանսայի արեւելածէս համայնքները կը համախմբուէին Փարիզի Առաջնորդական Աթոռին շուրջ, իրր թեմական ունենալով նոյն քաղաքի Գերբերջանիկ Արքեպիսկոպոսը՝ Միւթարեան Ֆելիքէն, որ իրեն օգնական եպիսկոպոս կը նշանակէր՝ յատկապէս Արեւելցիներու համար՝ Գերթ. Ռիւփը, հայածէս կաթողիկէ հասարակութեան Աթոռակալ կը կարգուէր Գերյ. Ամատունին:

Սամուէլ. - (Առանձին) Իրաւունք ունի Արիստակէսը. սատանան իր դոյնը այնքան արագ չի կրնար փոխել քան այդ Մարգարէն: Ի՞նչ սեւ ողբերգութիւն կը կատարուի իր հոգիին մէջ: Սուտը, կեղծիքը զէնք ըրած՝ թիթեղէ թագի մը ե-

Այնուհետեւ վեցամեայ լուռ եւ լուրջ աշխատանքով, յետ հարթելու բազմակողմանի դժուարութիւններ եւ ձեռք ձեռք կաղմակերպչական որոշ եւ ցայտուն յաջողութիւններ, ահա հայ կաթողիկէ համայնքը կ'ունենայ իր առանձին առաքելական Առաջնորդը (Exarque apostolique), Առաջնորդական ուրիշ Վիճակներու կարգին, ինչպէս են Ուրբայինացիները, կապուելով մայրաքաղաքին Մետրապոլիտական Աթոռին:

Գերյ. Հ. Կարապետ Թ. Մ. Վ. Ամատունի կը կարգուի նորակառոյց Վիճակին առաջին Առաջնորդը (Exarque). այդ երջանիկ առիթով՝ Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Սրբգ. Քահանայապետը եպիսկոպոսական աստիճան կը շնորհէ նորընտիր Առաջնորդին:



Ֆրանսայի հայութեան թիւը կ'անցնի հարիւր հազարը. հայ կաթողիկէները կը հասնին շուրջ տասնեւհինգ հազարի, որոնք մասնաւորապէս 1915ի կոտորածէն վերջէն է որ հաստատուած են այդ հիւրընկալ երկրին մէջ եւ հո՞՞նք զանդուածներ կաղմած Փարիզ, Մարսիլիա, Լիոն: Ա-

տեւէն է: Իր զաւակներն իսկ պատանդ տուաւ, ծախեց, կրակէ անցուց, միայն թէ թագ մը, թագ մը իր անիծեալ գըլխուն վրայ դրուի: Ոչ, Վասակ, ոչ, արդարութիւնը դաւաճանի մը գլխուն փառքի պսակ չի դնէր:

վ երջ առաջ ի ն ա ր ա ր ի

Արիստակէս. - Տէր իմ, եթէ գիտնայի թէ դուք էիք, մերկ ալ կը վազէի դուռը բանալու:

Վասակ. - (Անպարագանքով սեղանին վրայ բան մը փնտռելով) Հոս թուղթ մը, թուղթ մը չտեսա՞ք:

Արիստակէս. - (Սեղանին վրան տակը նայելով) Թուղթ մը, ի՞նչ թուղթ, հոս բան մը չկայ:

Վասակ. - Սուտ մի՛ խօսիր, հո՛ւս, հոս մնաց կարեւոր թուղթ մը (խարազան մը եւս փաշելով), քեզ կը սատկեցնեմ:

Արիստակէս. - Տէր իմ, ծառադ եմ, հոս հասարակաց տեղ է, ամէն մարդ կը մտնէ կ'ելլէ: Իմ հաշիւներուս թուղթերն ալ տարեր են:

Վասակ. - (Գրպանէն հանելով) Ա՛ռ քու իւզոտ թուղթերդ: Իմ թուղթս տուր:

Արիստակէս. - Կ'երդնում արեւուս վըրան, թուղթ չեմ տեսած:

Վասակ. - (Խարազանը բարձրացնելով) Գիտեպան, թուղթս կ'ուզեմ (կը խարազանէ):

Արիստակէս. - Ա՛յ, ա՛յ, օ՛Ֆ կռնակս, մէջքս:

Վասակ. - Հասկցուր այդ խուլ եւ համբերին. թուղթս տեսա՞ւ արդեօք:

Արիստակէս. - (Չեմբերով, գլխով ձեւեր կ'ընէ խուլին հասկցնելու համար) Խօսէ՛, ո՛վ համբ. հրաշք մ'ըլլար՝ բերանը բացուէր:

Վասակ. - (Արագ եւ կատաղի) Գիտեպան, ոսկորներդ կը ջախջախեմ, թուղթս կ'ուզեմ:

Արիստակէս. - (Սամուէլին, ձեռքերը օդին մէջ դողդողացնելով) Թուղթ...

Վասակ. - (Դեպի Սամուէլ) Հիմա կարգը քուկդ է, մարդկային վիժած (կը խարազանէ). թուղթս կ'ուզեմ, թուղթս...

Արիստակէս. - Քիչ մը ուժով զարկէք, մարմինը հաստ է, չի զգար:

Սամուէլ. - (Շփոթ ձեւեր կ'ընէ, խառնակ ձայներ կը հանէ):

Վասակ. - Ի՞նչ կ'ըսէ այս յիմարը:

Արիստակէս. - Ես ալ չեմ հասկնար. շատ յուզուած է:

Վասակ. - (Սամուէլին) Խօսէ՛, խօսէ՛: Ձղայնութենէս ինքզինքս կ'ուտեմ: Խօսէ՛ կենդանի մեռած, թուղթս ո՞ւր գնաց:

Սամուէլ. - (Անկապ ձայներ կը հանէ):

Արիստակէս. - Տէր իմ, ինչպէս գիտեմ, ձեզմէ վերջ չորս հայ զինուորներ եկան, թերեւս անոնք առած ըլլան:

Վասակ. - Վա՛յ, ձիւնը գլխուս, կորսուած եմ:

Արմենակ. - (Յանկարծակի բեմ ելլելով) Ո՛հ, մեծապատիւ Մարգարէն, դո՞ւք ալ այս տեղերը կը յաճախէք: Անշուշտ աղուոր որսի մը կը սպասէք:

Վասակ. - (Փոխուած, բոլորովին հանդարտ) Ոչ, տեղակալ. դիտես, սովորութիւն ունիմ քաղաքին անդորրութեան անձամբ հսկել: Կ'անցնէի, ըսի, փորս անհանդիստ է, մտնեմ գաւաթ մը ուժով զինի խմեմ: Իսկ դուք, արդեօք... ուրիշ նպատակով հոս եկեր էք:

Արմենակ. - Չորս զինուորներ տակաւին զօրանոց չմտան, եկայ զիրենք փրնտոնելու: (Արիստակէս գինի կը բերէ):

Վասակ. - Զինուորական բաժնի պէտք է Արմենակին պէս ըլլայ, միշտ պարտաճանաչ եւ միշտ դործի վրայ: Վարդանին հետ խօսիմ, զօրավարի աստիճանին բարձրացնեմ քեզ: Ժամանակ ունի՞ս քիչ մը միասին սա թաղերն ալ այցեցնեմք: Հանդիստ չեմ կրնար անկողին մտնել, երբ ժողովուրդը ապահով եւ խաղաղ քուն չունի: (Գինին կը խմէ):

Արմենակ. - Հաճոյքով, տէր Մարգարէն, բայց շուտով պէտք է զօրանոց վերադառնամ. թերեւս լուրթեան փողը զարկած ըլլան. ներկայութիւնս հարկաւոր է:

Վասակ. - Է՛հ, բարի մարդ (Արիստակէսին), շնորհակալ եմ պատուական զինին համար, ներսս քիչ մը հանդարտեցաւ (դուրս կ'ելլեն):

Արիստակէս. - Եթէ սատանային ըսես դոյնդ փոխէ՛ այսքան արագ չի կրնար կերպարանք փոխել: Վասակ եմ թէ ասիկա մարմին առած Մարգարէն պիտի ըլլայ: (Դեպի դուրս) Թքեր եմ քու մարգարանութեանդ վրայ, քու սեւ երեսիդ, թո՛ւ, հասկցա՞ր թշուառական շուն: (Սամուէլին, որ փոքրիկ ժպիտ մը ունի) Ի՞նչ կը խնայաս, խուլ համբ. ձեռք դուն ուտելու էիր: Որո՞ւն կը խօսիս, քարին ըսեր ես, ասոր ըսեր ես՝ նոյն բանն է: Վրաս կատաղութիւն պիտի գայ. թուղթը կ'ուզէ: Կաշի՞ս տամ, ի՞նչ տամ. չկայ, չկայ (դեպի դուրս), հասկցա՞ր բոլորտ մարգարան, սատանայի ձագ: Օ՛Ֆ, ինչպէս ալ կը ցաւի կռնակս: Իրաւունք ունին, սուր չունեցողը ոչխարի պէս կը մորթեն: (Սամուէլին) Է՛յ, խուլ (ձեւերով կ'ուզէ հասկցնել), խուլ, ես պիտի պառկիմ. դուն դուրսի դուռը եօթը շղթաներով դոցէ: Եթէ վաղը մեռած ըլլամ, Լիային հետ կ'ամուսնանաս, եւ զինիներս ձեզի օժիտ կը թողու՞մ (կ'երթայ):